

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԷՊՔ

ՍԻՊԵՐԻՅԻ ԴԷՂ ՃԱՄԲԵՐԴԱՆՈՒԹԻՒՆ :

ԱՐԿՈՒՍԹԱՅՈՒ ԿՈՄԻՏԵՆ ԵՐԳԻՐԸ ԿՐԳՐԷ ՈՐ Ա. նապոլիոն Տէմիտով Կոմսը՝ որ Ռուսաստանի մեծ կալուածատէրներէն մէկն է, աս մօտերս մեծ պատրաստութեան հետ է Սիպերիայի մէջ ուսումնական ճամբորդութիւն մը ընելու շատ մը գիտուն մարդկանց ընկերութեամբը : Աս ճամբորդութիւնը բնապատմական ուսմանց ալ շատ օգուտներ կրնայ ընել, որովհետեւ ինչուան հիմա Սիպերիայի վրայ քիչ տեղեկութիւն ունինք, ան ալ միայն փալատի, Միտսենտորֆի, Հէլմերսընի ու Չեաչէֆի ըրած ստորագրութիւններէն աւելի կատարեալ կը սեպուին Ա. Հոմապոլի ու Էհրէնպէրկի տուած ծանօթութիւնները : Իսկ Սիպերիայի երկրաբանական ու հանքաբանական հարստութիւններն լաւ կ'երևան՝ Պետրոպոլիի Մուսէնին ու Լէթնայէրկի իշխանին թանգարանին մէջ, նմանապէս նոյն Տէմիտով իշխանին անցեալ տարուան Լոնտոնի հանգիստագրութեան զրկած յաւաքի քարէ գործուածքներէն, որն որ միայն Սիպերիա կը գտնուի :

ՄԻՆԵՐԻ ԴԷ :

ՀՈՌՄԱՅՈՒ ՕՐԱԳԻՐԸ ԿՐԳՐԷ Թէ մեծանուն Տէ Կասպարիս Նափոլիի աստղաբաշխը վեցերորդ մոլորակ մ'ալ գտեր է մարտի 17ին իրիկունը Հռեգուղոս համաստեղութեան մօտ, որուն մեծութիւնը 10^{րդ} և 11^{րդ} աստղերուն չափ է եղեր :

ՆՐԻ ԳԵՆԱԿԻ ՆԱԽԻ ԴԷ :

ԱՄԵՐԻԿԱՅՈՒ ՆՈՐ ԵՈՐՔ քաղաքը Լամպեր Ա. Լէքսանգրի անունով մէկը տեսակ մը նաւակ մը շիներ է, որ ուղած ատենը ծովուն տակը կ'իջնայ ու նորէն ջրին երեսը կ'ելլէ : Աս նաւակին փորձը մարտի 19ին ըրեր են 500 հոգւոյ առջև, որոնց շատը ծովային պաշտօնեայներ են եղեր : Նշանը արուելուն պէս Ալէքսանգրը իրեք հոգւով մէկ տեղ, նաւակը լաւ մը գոցելէն ետեւ, սկսեր են ջրին տակը իջնել 40 ոտք խորութեամբ և տալը վայրկեանէն հասեր են ծովուն յատակը : Խօսք զրած են եղեր որ իջնողները ժամ մը ջրին տակը կենան, բայց յետոյ 25 վայրկեանը բաւական սեպելով նորէն նշանը արուածին պէս, նաւակը երկուքովէս վայրկեանէն նորէն ջրին երեսն ելեր է :

ՆՐԻ ԿՆԻԳ ՈՒՆՈՅ :

ԱՆԵՐԴՉՔԻՍ այլևայլ կողմերը գտուած ոսկւոյ հանքերը՝ օր աւուր վրայ այնչափ կը շատնան, որ կարծուի Թէ քիչ ատենէն աս մետաղիս արժէքն ալ շատ պիտի ցածնայ և ստակներու վրայ ալ մեծ փոփոխութիւն պիտի ըլլայ : Աւարալիայէն եկած

սառց լուրերուն նայելով՝ հոն գտուած ոսկերէր հանքերը Քալիֆորնիայիներէն վար չեն մնար : Նմանապէս կ'ըսուի Թէ մօտերս Հուստոնի ծոցին մէջ եղած Շարլոթ Թագուհի լսուած կղզին մէջ առատ ոսկւոյ հանքեր գտնուեր են, և ելած ոսկին շատ զուտ ու գիւրահալ է եղեր :

ԵՆԷԳՐԱԿԱՆ ԺԱԳԻՏԱՆՈՒԹԻՒՆ ԵՐ ԳՐԵԾԹԱՆՈՒԹԻՒՆ :

ՓՅՐԻՋԵՆ Լիոն երթալու երկաթէ ճամբուն վրայ փորձ մը ըրեր են ելեքտրական մագնիսութեամբ անդաշարժ մեքենայները բանեցնելու համար : մագնիսական գործիքներն հազորդուած են եղեր զօրաւոր շոգեշարժ մեքենայի մը, և շիտակ հորիզոնական ճամբուն վրայ փորձը լաւ յաջողէն զատ, նաև 1 մետրոնին 16 հազարորդամեծ շեղութեամբ ճամբուն վրայ ալ յաջողելու մեծ յոյս կայ :

ԿԱՐԳԷ ԳՆՐՈՒ ՈՒՅ :

ՕՐԱԳՐԻ մը մէջ կը կարդանք Պ. Վիլքթոր Գալլիոյ Ալիկզէս կամ Հերթուլէսը աս օրերս Թրեստ հասաւ : աս մարդս Հալքի ծնած է, իրեն մարմնոյն ուժը խեղճ մտքէ վեր բան մի է : աս միայն բաւական ըլլայ ըսելը, որ միջակ մեծութեամբ թռնդանօթ մը գլխուն կամ ուսին վրայ դնել տալով, զանիկայ արձրկել կու տայ, առանց մարմնի գողացնելու կամ գծաչափ մը կեցած տեղէն շարժելու :

ԵՐԵՆՅԻ ԴԷ :

ՔՐՈՒՍԻՔԱՅՈՒ ԼՐԱԳՐԻՆ մէջ աս հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնը կը կարդանք : Իրեք աւիս կայ որ բոլոր Ծիֆալոյի բնակչացը արտաքայ կարգի զարմանացն ու առանձին ուշադրութեան նիւթ մը եղած է տասուեկու տարուան տղայ մը Անթուէն-Ֆրանսուա Բէրէթթի անունով : Ասիկայ ուղիմ ու ճարպիկ տղայ մըն է : բայց իրեն կարգէ գուրս յատկութիւնը այս է, որ մութ խցի մը մէջ տղուն ճակտին վրայ տեսակ մը լոյս կամ պայծառութիւն կը տեսնուի, զօրաւոր ելեքտրականութեամբ լցուած Լէյտեան անօթէ մը առաջ եկած լուսոյն նման : աս տարբերութեամբ որ Լէյտեան անօթին ելեքտրականութիւնը ընդունող անձը՝ սաստիկ ցնցմունք մը վրան կը զգայ, ուր Բէրէթթի իր լուսաւորութեանը ժամանակ աւանակին վրան բան մը չիմանար : Նոյն երևոյթը առաջ կու գայ Թէ որ մետաքսէ թաշկինակ մը կամ որ և իցէ մետաքսեղէն լաթ մը գլխուն գալցընես : Այս բանս այնպէս մը կը ցուցնէ, որ բուն երևոյթը տղուն մարմնոյն մասնաւոր յատկութիւնն է, ու հագած զգեստներէն չկախուիր : Բայց Թէ արդեօք ինչէն առաջ կու գայ այս ըսած երևոյթնիս, փոսփորականութենէ Թէ ելեքտրականութենէ, որոշ չգիտցուիր :